ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
<<ՄՇԱԿՈՒՅԹ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՈԱԿ)

22, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան.
Կ.Դեմիրճյանի անվան հրապարակ
Համայնքապետարանի վարչական շենք

02 փետրվարի 2024թ. № 01-ՍՑ

ք. Չարենցավան

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով «ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2024/1» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 31.01.2024թ.-ի զեկուցագրով անհատ ձեռնարկատեր «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ»-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, *պարզեցի հետևյալը.*

1. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի ներկայացրած փաստերը և պահանջը.

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 31.01.2024թ.-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար 2023 թվականի նոյեմբերի 09-ին հայտարարված գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման «ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2024/1» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատերը, որի արդյունքում 2023 թվականի նոյեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ միջև կնքվել է գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի մատակարարման թիվ «ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2024/1» պայմանագիրը: Ընդ որում, պայմանագրով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվելու է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Համապատասխան ֆինանսական միջոցները հաստատվելուց և գնումների պլանը գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 2024 թվականի հունվարի 09-ին էլեկտրոնային փոստի միջոցով առաքվել է ծանուցում համաձայնագիր կնքելու մասին: 2024 թվականի հունվարի 29-ին սույն ընթացակարգի գնումները համակարգողի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով առաքվել է ծանուցում այն մասին, որ համաձայնագրի կնքման վերջնաժամկետը սահմանված է սույն թվականի

հունվարի 30-ը ներառյալ: «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից Օրենքով և պայմանագրով սահմանված ժամկետում չի ստորագրվել համաձայնագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք միակողմանի լուծել 2023 թվականի նոյեմբերի 22-ին կնքված թիվ «ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2024/1» պայմանագիրը, «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար 09.11.2023թ.-ին հայտարարված Ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտ ներկայացրած «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ մասնակցության հայտը պատասխանատու ստորաբաժանման կողմից գնահատվել է բավարար:

2. 2023 թվականի նոյեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ միջև կնքվել է գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի մատակարարման թիվ «ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2024/1» պայմանագիրը: Ընդ որում, պայմանագրով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվելու է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

3. Համապատասխան ֆինանսական միջոցները հաստատվելուց և գնումների պլանը գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 2024 թվականի հունվարի 09-ին էլեկտրոնային փոստի միջոցով առաքվել է ծանուցում համաձայնագիր կնքելու մասին: 2024 թվականի հունվարի 29-ին սույն ընթացակարգի գնումները համակարգողի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով առաքվել է ծանուցում այն մասին, որ համաձայնագրի կնքման վերջնաժամկետը սահմանված է սույն թվականի հունվարի 30-ը ներառյալ: «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից Օրենքով և պայմանագրով սահմանված ժամկետում չի ստորագրվել համաձայնագիրը:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արթուր Աբգարյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, ***հայտնում եմ հետևյալը.***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը.

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Այսպիսով՝

Համաձայն 2023 թվականի նոյեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ միջև կնքված գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի մատակարարման թիվ «ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2024/1» պայմանագրի՝ «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատերը պարտավորվել է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացնելու նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կնքել համաձայնագիր՝ համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Համապատասխան ֆինանսական միջոցները հաստատվելուց և գնումների պլանը գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 2024 թվականի հունվարի 09-ին էլեկտրոնային փոստի միջոցով առաքվել է ծանուցում համաձայնագիր կնքելու մասին: 2024 թվականի հունվարի 29-ին սույն ընթացակարգի գնումները համակարգողի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով առաքվել է ծանուցում այն մասին, որ համաձայնագրի կնքման վերջնաժամկետը սահմանված է սույն թվականի հունվարի 30-ը ներառյալ: «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից Օրենքով և պայմանագրով սահմանված ժամկետում չի ստորագրվել համաձայնագիրը:

Հիմք ընդունելով 2023 թվականի նոյեմբերի 22-ին կնքված գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի մատակարարման թիվ «ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2024/1» պայմանագրի 8՝13-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը միակողմանի լուծել է 22.11.2023թ. կնքված թիվ «ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2024/1» պայմանագիրը:

ՈՒսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատերը թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացրած հիմքերը՝ «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը, «ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզիկական անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	**խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը**	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ՀԱՍՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ» անհատ ձեռնարկատեր	40623678	ք. Զարենցավան, Քոչարի փողոց թիվ 1	-	X	-	02.02.2024թ. «ՀՀ-ՄՀՌԻԿ-ՄԱԿՊՁԲ-2024/1»

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՏՆՕՐԵՆ Ա. ԱԲԳԱՐՅԱՆ